

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԱՐԹՈՒՐԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

**ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՈՃԱԿԱՆ ԵՎ
ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Ժ.02.07 – «Ռումանագերմանական լեզուներ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Աննա Տարիելի Կնյազյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Հրանուշ Ժորայի Թովմասյան
Բ.Գ.Թ., դոցենտ Գոհար Ռազմիկի Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲԿԳԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2025 թվականի հունվարի 17-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Սույն աշխատանքը վերաբերում է դիվանագիտական դիսկուրսի տեսական հիմքերի և գործնականում դրա դրսևորումների ուսումնասիրությանը, ինչպես նաև դիվանագիտական դիսկուրսի՝ որպես դիվանագիտական հաղորդակցության հիմնական բաղադրիչի վերլուծությանը դիվանագիտության դաշտում: Ատենախոսության ուսումնասիրության **ուղրաը** դիվանագիտական լեզվաբանությունն է, որը, իբրև առանձին գիտակարգ, առաջացել է երկու ինքնուրույն գիտությունների՝ լեզվաբանության և դիվանագիտության փոխհատման կետում և սերտորեն կապված է լեզվաբանական ժամանակակից գիտակարգերի, հատկապես՝ հաղորդակցական և ճանաչողական լեզվաբանության հետ:

Սույն ատենախոսության մեջ որպես հետազոտության **առարկա** քննության են ենթարկվում դիվանագիտական դիսկուրսի (դիվանագիտական փաստաթղթերի, թվային դիվանագիտության դիսկուրսի) ոճական, տերմինաբանական առանձնահատկությունները, դիվանագիտական հաղորդակցության մեջ կիրառվող հուզագրացական խոսքի առանձնահատկությունների լեզվական դրսևորումները:

Հետազոտության **նյութը** ներքին և արտաքին դիվանագիտական գրագրությունն է: Վերլուծվել են դիվանագիտական փաստաթղթեր (*հավատարմագրեր, նոտաներ, կոմյունիկեներ, հուշագրեր, հուշաթերթիկներ, դեմարշներ, միջազգային պայմանագրեր, նամակներ* և այլն), 2021-2023 թթ. դիվանագիտական գերատեսչությունների պաշտոնական կայքերում, սոցիալական ցանցերում, դիվանագետների ինստիտուցիոնալ և անձնական էջերում հրապարակված տեքստեր: Անգլերենի դիվանագիտական տերմինների (ավելի քան 600 տերմին) ձևակառուցվածքային քննությունը կատարելիս առաջնորդվել ենք Ն. Տ. Չալմյանի *Դիվանագիտական և հյուպատոսական ծառայության տերմինների անգլերեն-հայերեն բացատրական բառարանով* և Լ. Թուրխալյանի *Դիվանագիտական տերմինների և հապավումների բառարանով*:

Աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել լեզվաոճական հնարների դերը, դիվանագիտական տեքստերի կառուցվածքային և տերմինաբանական առանձնահատկությունները, որոնք ունեն առանձնահատուկ նշանակություն արդյունավետ դիսկուրսի կառուցման գործում: Ընդ որում, կարևորվում է դիսկուրսի վերլուծությունը, որը գիտության զարգացման ներկա փուլում ձեռք է բերել միջառարկայական բնույթ: Ատենախոսության նպատակն է՝ ուսումնասիրել դիվանագիտական դիսկուրսի տեսական-մեթոդաբանական հիմքերը, ներկայացնել այս գիտակարգի զարգացումը և ցույց տալ վերջինիս նշանակությունը արդի դիվանագիտական գործընթացներում: Աշխատանքը

նպատակ ունի նաև ուսումնասիրել թվային դիվանագիտությունը՝ որպես հաղորդակցության նոր միջոցի ռազմավարություն, հաղորդակցական հարթակների լեզվական առանձնահատկությունները, ինչպես նաև վիրտուալ տարածքում դիվանագիտական հաղորդակցության դիսկուրսիվ ժանրերի գործառական յուրահատկությունները:

Հետազոտության ընդհանուր նպատակով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. քննել դիվանագիտական դիսկուրսը և բացահայտել դրա չափորոշիչներն ու համակարգաստեղծ հենքային բնութագիրը,
2. վերլուծել թվային դիվանագիտության դիսկուրսի ժանրային առանձնահատկությունները և բացահայտել ռազմավարությունների կիրառման բնույթը,
3. տարբերակել, դասակարգել և նկարագրել դիվանագիտական փաստաթղթերին բնորոշ գծերը,
4. ուսումնասիրել դիվանագիտական հաղորդակցության մեջ հուզարտահայտչականության լեզվական միջոցները,
5. համակողմանի վերլուծության ենթարկել դիվանագիտական դիսկուրսի ոճական և գործաբանական բնութագիրը կառուցվածքային և տերմինաբանական յուրահատկությունների հաշվառումով և պարզաբանել դրանց կարևորությունը արդյունավետ դիսկուրսի կառուցման գործում:

Ներկայացվող աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է ժամանակակից լեզվաբանության զարգացման միտումներով, որոնք մեծ ուշադրություն են դարձնում ինստիտուցիոնալ դիսկուրսի հաղորդակցական և գործաբանական կողմերին, հաղորդակցվողների փոխգործակցության խնդիրներին, լեզվի ուսումնասիրությանը՝ մարդու գործունեության հետ սերտ կապի մեջ, ինչպես նաև թվային դիվանագիտության աճող դերին: Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև լեզվաբանական գրականության մեջ թվային դիվանագիտության նոր ժանրերի և հաղորդակցական ռազմավարությունների անբավարար լուսաբանմամբ: ՏՏ տեխնոլոգիաների օգտագործմամբ դիվանագիտական դիսկուրսի զարգացման ներկայիս մակարդակը համացանցում թույլ է տալիս խոսել թվային դիվանագիտության՝ որպես դիվանագիտական դիսկուրսի նոր ձևի ձևավորման մասին:

Սույն ատենախոսության **գիտական նորույթը** դիվանագիտական դիսկուրսի հետազոտություն իրականացնելն է երեք գիտակարգերի՝ հանրամշակութաբանության, կառուցվածքային և գործառական լեզվաբանության գուգադիր հենքի վրա: Աշխատանքի նորույթն այն է, որ լեզվական ընդգրկուն

նյութի հիման վրա փորձ է արվում ուսումնասիրել դիվանագիտական գրագրության լեզվառճական առանձնահատկությունները: Մյուս կողմից՝ սույն ուսումնասիրությունն ընդգրկում է դիսկուրսի տեսության ոլորտը, որը նույնպես գտնվում է ժամանակակից լեզվաբանական հետազոտությունների հետաքրքրության շրջանակներում: Ուսումնասիրության նորույթը նաև այն է, որ սույն աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում համալիր վերլուծելու թվային դիվանագիտության դիսկուրսը՝ որպես հաղորդակցության նոր միջոց:

Հետազոտության խնդիրներով և վերլուծվող նյութի առանձնահատկություններով պայմանավորված՝ որպես ուսումնասիրության հիմնական **մեթոդներ** են ընտրվել նյութի անմիջական դիտարկման մեթոդը՝ արդյունքների վերլուծությամբ և ընդհանրացմամբ, համատեքստային-մեկնաբանական մեթոդը, ինտենտ վերլուծության մեթոդը (հասցեագրողի հաղորդակցական մտադրությունները վեր հանելիս), բովանդակության (կոնտենտ) վերլուծության մեթոդը (տեքստում որոշակի բնութագրերի կիրառման հաճախականությունը պարզելու համար, որոնք հանդես են գալիս որպես արտալեզվական իրողությունների ցուցիչներ), բովանդակության քանակական և որակական վերլուծության մեթոդները, ինչպես նաև լեզվաբանական նկարագրության և դասակարգման մեթոդները (դիվանագիտական տերմինաբանությունը, դիվանագիտական դիսկուրսիվ ռազմավարություններն ու մարտավարություններն ուսումնասիրելիս):

Հետազոտության **տեսական նշանակությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա արդյունքները որոշակիորեն նպաստում են դիսկուրսի ուսումնասիրության զարգացմանը և թույլ են տալիս ընդլայնել ու խորացնել դիվանագիտության լեզվի մասին գիտելիքները գոբալ քաղաքական փոփոխությունների համապատկերում: Մյուս կողմից՝ հաղորդակցական և գործառական գործունեության վերլուծությունը ճշգրտում է դիվանագիտական հաղորդակցության հանրամշակութային ու հոգեբանական դիտանկյունները: Տեսական առումով հետազոտությունը կարևոր նշանակություն ունի նաև թվային դիվանագիտության դիսկուրսի վերլուծության հետ կապված ընդհանուր լեզվաբանության, դիսկուրսիվ լեզվաբանության, տեքստի լեզվաբանության, հանրալեզվաբանության, լեզվագործաբանության հիմնախնդիրների և մեթոդների մշակման հարցում: Աշխատանքը նշում է նաև դիվանագիտական դիսկուրսի հետագա ուսումնասիրության ուղիները մեդիա դաշտում, մասնավորապես՝ *X-ի* (*Twitter-ի*) և *Facebook-ի* թվային հարթակներում:

Հետազոտության կիրառական արժեքը: Աշխատանքի արդյունքները հետաքրքրություն են ներկայացնում հանրալեզվաբանության, գործաբանության, կոնֆլիկտաբանության, հոգելեզվաբանության համար՝ հնարավորություն

ընձեռելով առավել ճշգրիտ պատկերացնելու ժամանակակից լեզվաբանության մեջ դիվանագիտական դիսկուրսի պատկերը: Ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված հիմնական տեսական դրույթներն ու եզրակացությունները կարող են ներդրվել բակալավրիատի և մագիստրատուրայի բուհական ուսումնական դասընթացներում՝ «Հաղորդակցության տեսության հիմունքներ», «Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները դիվանագիտության մեջ», «Թվային դիվանագիտություն», «Օտար լեզու մասնագիտական նպատակների համար» և այլն: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների, քաղաքագիտություն և դիվանագիտություն ուսումնասիրող մասնագետների, թարգմանիչների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների, դիվանագիտական առաքելությունների մամուլի կցորդների, ինչպես նաև սոցիալական ցանցերում բլոգներ վարող դիվանագետների և պետական գործիչների համար:

Հետազոտության նյութի փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են յոթ գիտական հոդվածներում: Աշխատանքում կիրառվող մոտեցումները քննարկվել են ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի նիստերում:

Աշխատանքի կառուցվածքը: Նպատակներն ու խնդիրները պայմանավորում են հետազոտության ընդհանուր տրամաբանությունն ու աշխատանքի կառուցվածքը, որը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք, ըստ անհրաժեշտության, բաժանվում են ենթագլուխների, ուսումնասիրության հիմնախնդիրը լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ սահմանվում են հետազոտության առարկան, հիմնավորվում ուսումնասիրության արդիականությունն ու գիտական նորույթը, ձևակերպվում ուսումնասիրության նպատակներն ու հիմնական խնդիրները, նշվում մեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները, ներկայացվում աշխատանքի տեսական և գործնական արժեքը, հիմնավորվում աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը** (*Դիվանագիտական դիսկուրսի հետազոտությունները լեզվաբանության ժամանակակից հարացույցում*) բաղկացած է երկու ենթագլուխից: Առաջին ենթագլուխը (*Դիվանագիտական դիսկուրսի հետազոտման լեզվաբանական հայեցակերպը*) նվիրված է տեսական խնդիրների քննությանը, որտեղ մանրամասնորեն ներկայացվում է դիվանագիտական ենթառձը՝ որպես պաշտոնական-գործնական գործառական ոճի ենթահամակարգ:

Երկրորդ ենթագլխում (*Թվային դիվանագիտության լեզվական առանձնահատկությունները*) բացահայտվում են «դիվանագիտական դիսկուրս», «թվային դիվանագիտություն» հասկացությունները, քննության են առնվում դրանց կառուցվածքային հատկանիշները: Թվային դիվանագիտությունը հաճախ տարբեր կերպ է անվանվում՝ *կիրերդիվանագիտություն, ցանցային դիվանագիտություն, էլեկտրոնային դիվանագիտություն* (e-diplomacy) և *թվիպլոմատիա* (twitplomacy): Թվային դիվանագիտությունը սահմանվում է որպես հանրային դիվանագիտության ձև, որը հիմնված է ՁԼՄ-ների գործիքների, մեդիա ու թվային հնարավորությունների վրա՝ միջազգային հաղորդակցություն հաստատելու համար: Այն տարբերվում է դասական հանրային դիվանագիտությունից և ավանդական հաղորդակցությունից գլխավորապես հաղորդակցության ավելի բաց բնույթով, թափանցիկությամբ, ինչպես նաև տեղեկատվության ավելի մեծ հասանելիությամբ¹:

Դիվանագիտական գերատեսչության յուրաքանչյուր կայք պարտադիր ունի տարբեր սոցիալական ցանցերում պաշտոնական օգտահաշիվների հղում: Օգտագործվող սոցիալական ցանցերի ցանկը բազմազան է, սակայն թվային դիվանագիտության մեջ հիմնականները **Facebook-ն ու X-ն (Twitter)** են, որոնք օգտատերերին հաղորդակցային լայն հնարավորություններ են ընձեռում: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիվանագիտական գերատեսչությունների պաշտոնական կայքերում զետեղված են հատվածներ քաղաքական առաջնորդների և դիվանագետների տեսանկարահանված ելույթներից, փաստաթղթեր, ձայնագրություններ, մեջբերումներ, վիճակագրական տվյալներ: Դիվանագիտական կայքերը վերլուծելիս մեր կողմից ձևակերպվել են կայքի կառուցվածքի, դիզայնի, բովանդակության առանձնահատկությունների չափանիշներ: Ըստ այդ չափանիշների՝ պատահական ընտրանքի մեթոդով ընտրվել և դիտարկվել են աշխարհի մի շարք երկրների՝ Հայաստանի, Վրաստանի, Ավստրիայի, Բելգիայի, Մարոկկոյի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի դիվանագիտական գերատեսչությունների կայքերը (2022 թ. փետրվարի դրությամբ):

Այս դարաշրջանում թվային տեխնոլոգիաների կիրառությունը մեծ տարածում է գտել նաև 2022-2023թթ. Միացյալ Թագավորության արտգործնախարար՝ Ջ. Բլևերլիի ելույթներում: Նա հաճախ է օգտագործում այդ հարթակները՝ մարդկանց հետ ուղիղ կապ հաստատելու համար, ինչպես, օրինակ, իր թվիթերյան էջում հայտնել է Չիլիի արտգործնախարարի հետ իր հանդիպման մասին՝ միաժամանակ

¹ Карпович, О.Г., Троянский, Г.М. Особенности использования цифровой дипломатии иностранными внешнеполитическими ведомствами и международными организациями. *Дипломатическая служба*. 2020, № 4, 96-105.

տրամադրելով հավելյալ տեղեկատվություն քննարկված թեմաների արդյունքների վերաբերյալ:



Այս կամ այն թեմայի, մասնավորապես՝ Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ իր սեփական կարծիքը հայտնելով՝ նա նպատակ է հետապնդում ազդելու ընթերցողների գիտակցության վրա:

Ռուս-ուկրաինական պատերազմից գրեթե 1 տարի անց՝ Ուկրաինայի իրավիճակի վերաբերյալ խորհրդարանում ծավալած բանավեճում Ջ. Քլեմերլի կողմից ներկայացված ելույթի² ուսումնասիրությունը թույլ է տվել ատանձնացնելու երկու տեսակի հուզական միավորների խումբ՝ **հակամարտություն և սպառնալիք պարունակող բառապաշար**. *Russian forces have killed thousands of Ukrainians; a hostile attack; the Ukrainians have uncovered mass graves; evidence of rape and torture on an unimaginable scale; wiping out their country; aggression; withdrawing his forces; casualties are immense և այլն, հուզական երանգավորմամբ բառապաշար, որում արտացոլված են նաև խառտի գնահատողական դատողությունները. *his invasion was unprovoked and it was illegal; I predicted that if Putin was foolish enough to invade Ukraine; freedom will win; we have become the closest of friends, and the most committed of partners և այլն*: Այս հուզական միավորները մեծ մասամբ դուրս են գալիս մեկ բառի շրջանակից և ներկայանում*

² General debate on Ukraine, 20 February 2023: Foreign Secretary's opening statement: <https://www.gov.uk/government/speeches/ukraine-foreign-secretary-opens-general-debate-february-2023> (17.05.2023).

են որպես շարահյուսական բառակապակցություններ: Պետք է նշել, որ Ջ. Քլեյնթրիի ելույթի նպատակն է արծարծված հիմնախնդիրների վերաբերյալ հուզական արձագանք առաջացնելը ոչ միայն գործընկերների, այլև բոլոր նրանց շրջանում, ովքեր դիտում/լսում են ելույթը համացանցում, ինչը կարելի է դիտարկել որպես տեղեկատվական ներգործության բաղկացուցիչ մաս:

Համացանցային հաղորդակցության առանձնահատկությունները հնարավորություն են տալիս օգտվելու խոսքի ազատությունից: Սակայն պետության պաշտոնական ներկայացուցչի կողմից գործընկերոջը ծաղրելը, սպառնալիքներ հնչեցնելը կամ վարկաբեկելը կարող է հանգեցնել միջազգային լարվածության սրման: Օրինակ, Մեծ Բրիտանիայի վարչապետ Բորիս Ջոնսոնը դիվանագիտական շփումների ժամանակ նույնպես այքի չի ընկել իր պատշաճ կեցվածքով ու խոսքով: Դեռևս 2007 թվականին արտգործնախարարի պաշտոնում նա Հիլարի Քլինթոնին համեմատել է հոգեբուժարանում աշխատող սադիստ բուժքրոջ հետ՝ մասնավորապես շեշտադրելով նրա ներկած շեկ մազերը, հաստ շուրթերը և պողպատե հայացքը. *She's got dyed blonde hair and pouty lips, and a steely blue stare, like a sadistic nurse in a mental hospital*³: Նշված օրինակում նկատվում են ագրեսիվության տարրեր: Դիվանագիտական հաղորդակցության մեջ քաղաքական գործունեությունն առանձնանում է ագրեսիվության և հանդուրժողականության մշտական դիալեկտիկայով⁴:

Երկրորդ գլուխը (*Դիվանագիտական դիսկուրսի լեզուն և ոճը*) բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում (*Դիվանագիտական դիսկուրսի հաղորդակցական և գործարանական առանձնահատկությունները*) վերլուծվում են դիվանագիտական հաղորդակցության ռազմավարություններն ու մարտավարությունները: Դիվանագիտական դիսկուրսին բնորոշ է մտաշահարկման տարրը՝ հասցեատիրոջ գիտակցության վրա ներգործությունը, իսկ դիվանագիտական հաղորդակցությունը մտաշահարկային երկխոսություն է, որը ենթադրում է գրուցակցի քողարկված կառավարումը, հասցեատիրոջ գործունեության կարգավորումը, նրան անհրաժեշտ գործողությունների դրդելը՝ ներշնչելով այդ գործողությունների անհրաժեշտությունը:

Երկրորդ ենթագլխում (*Դիվանագիտական փաստաթղթերի բնութագիրը*) նկարագրվում են դիվանագիտական փաստաթղթերն ու դրանց կիրառման իրադրությունները: Աշխատանքում ներկայացրել ենք դասակարգման մեր տարբերակը և առանձնացրել դիվանագիտական փաստաթղթերի հետևյալ

³ Boris Johnson on Hillary Clinton: "a sadistic nurse in a mental hospital": <https://x.com/sarahlyall/status/753311381122904064?lang=en> (11.04.2023).

⁴ Чудинов, А.П. Политическая лингвистика: учеб. пособие. М.: Флинта: Наука, 2006.

տեսակները. 1. հավատարմագրեր, 2. նոտաներ (*վերբալ, անձնական, շրջանառու, ուղեկցող*), 3. կոմյունիկեներ, 4. հուշագրեր, հուշաթերթիկներ, 5. դեմարշներ, 6. միջազգային պայմանագրեր, 7. նամակներ, հեռագրեր (*պաշտոնական, անձնական, կիսապաշտոնական, ուղեկցող*): Մեր համոզմամբ՝ այս դասակարգումը ներառում է դիվանագիտական փաստաթղթերի հիմնական տեսակները և արտացոլում հիմնական միջպետական ակտերը, որոնք տարբեր երկրների արտաքին գործերի նախարարությունները փոխանակում են դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, այդ հարաբերությունները զարգացնելու, ամրապնդելու կամ դադարեցնելու նպատակով: Ստորև ներկայացնենք Հյուսիսային Եվրոպայի Արտաքին գործերի կոմիտեի համատեղ հայտարարության վերլուծությունը՝ ռուս-ուկրաինական հակամարտության վերաբերյալ.



**2022 NORTHERN NEIGHBOURS PARLIAMENTARY CONFERENCE COMMUNIQUE:
STATEMENT FROM THE CHAIRS OF FOREIGN AFFAIRS COMMITTEES FROM
NORTHERN EUROPE ON RUSSIA-UKRAINE**

We, the chairs of the parliamentary foreign and international affairs committees of Northern Europe, met in London on 16–17 June to discuss Russia's illegal invasion of Ukraine and its far-reaching implications for security and stability within Europe and beyond.

We continue to stand in solidarity with the people of Ukraine. We pay tribute to their extraordinary sacrifices in the pursuit of freedom, the territorial integrity of their country and the sovereignty of their democracy. It is incumbent on us to respond collectively and decisively to a war that seeks to change the status quo through force, and which is already redefining the future of Europe.

1. We therefore **welcome the international community's support to Ukraine, which it must continue and intensify**—speeding up the delivery of heavy weapons and other military assistance to the Ukrainian Armed Forces, in addition to increasing financial support to the Ukrainian Government for its day-to-day spending and to neighbouring countries hosting nearly 5 million Ukrainian refugees. We further **call on governments to begin planning, in close cooperation with the Government of Ukraine, for the long-term reconstruction of Ukraine.**
2. We **condemn in the strongest possible terms the serial breach of international law and the perpetration of war crimes in Ukraine by the Russian Armed Forces and their proxies.** We are extremely concerned by their mistreatment of prisoners of war—including the sham trials of active-duty soldiers under the Ukrainian military chain of command, who are protected under the Geneva Conventions. We reaffirm our complete opposition to the death penalty in all circumstances.
3. We **call on the international community to take all necessary steps to deter Russian military personnel from the further terrorisation of the people of Ukraine, ensuring that those responsible are held to account.** This includes the **establishment of a Special Tribunal for the Punishment of the Crime of Aggression against Ukraine.** Evidence of war crimes continues to mount, from the deliberate military targeting of civilians and hospitals, to the use of civilians as human shields, sexual assault and rape, torture, abduction, forced deportation and forced passportisation. Investigators working in support of the International Criminal Court must have immediate access to all relevant sites in Ukraine to preserve and record evidence, as well as the resources to sustain their work in the long term. It is also essential that the International Committee of the Red Cross and other impartial international humanitarian organisations are granted access to places such as Mariupol to provide relief—food, water and medicines—to citizens under occupation, as is incumbent on Russia under international humanitarian law.
4. We **wholeheartedly condemn Russia's weaponisation of food and hunger as tools to increase its power and leverage.** The UN Secretary-General has warned

that hundreds of millions of people are at risk of "hunger and destitution" because of food shortages caused by the war. Some 750,000 are already experiencing starvation and acute malnutrition in Ethiopia, Afghanistan, Somalia, South Sudan and Yemen. Yet Russia continues its blockade of Black Sea ports, is conducting sustained attacks on grain silos, fertiliser stores and farming infrastructure, and is stealing grain from occupied areas for its own consumption or profit.

5. We **call on our governments to work with likeminded partners to enhance our collective security against military and nuclear threats in Europe, linking the High North with the Baltics and the Black Sea, and urgently acting to reduce nuclear risks.** Russia is among the hostile states capable of cutting the undersea fibre-optic cables that are vital to our communications and our economies. President Putin recently restated his ambition to return Russia to imperial glories through territorial conquest, while the threat of a nuclear strike by Russia hangs over the current conflict. We therefore also **urge our governments to implement strategic and nuclear risk-reduction measures.** We also reaffirm the **Nuclear Non-Proliferation Treaty as the cornerstone of the nuclear disarmament and non-proliferation regime.**
6. We **pledge to build our countries' resilience to the more insidious influence of hostile states and their proxies, learning from each other** how we can better protect our politics, societies and economies against the range of tools used by hostile states to coerce, and to undermine our cohesion and prosperity. Our open societies and economies are also vulnerable to methods of exploitation that we have not yet identified. We therefore **call on our governments to establish horizon-scanning mechanisms for insidious state threats to our democracies and free-market economies, and to share the insight generated with allies and non-likeminded partners** to create a common threat picture.

Michael Aastrup Jensen Vice Chairman, Foreign Policy Committee Denmark	Rihards Kols Chairman, Foreign Affairs Committee Latvia
Marko Mihkelson Chairman, Foreign Affairs Committee Estonia	Laima Liucija Andrikiėnė Chairperson, Committee on Foreign Affairs Republic of Lithuania
Jussi Halla-aho Chairperson, Foreign Affairs Committee Finland	Kenneth G Forslund Chair, Committee on Foreign Affairs Sweden
Bjarni Jónsson Chair, Foreign Affairs Committee Iceland	Tom Tugendhat MP Chair, Foreign Affairs Committee United Kingdom
Charles Flanagan Chair, Committee on Foreign Affairs and Defence Ireland	

Հայտարարությունը կազմված է նախաբանից, բուն հասկածից, վերջաբանից: Նախաբանում ներկայացվում է հանդիպման ամիս-ամսաթիվը, վայրը և հանդիպման նպատակը: Բուն հասկածում ներկայացվում են հիմնական

անելիքները և հանդիպման արդյունքները: Կարևոր մտքերը նշվում են առանձին կետերով և թավ, վերջաբանում ներկայացված են հանդիպման կոմիտեի անդամների անուն-ազգանունները՝ ըստ երկրների: Խոսքը շարադրված է հստակ և հասկանալի՝ առաջին ընթերցումից արդեն իսկ պարզ ընկալելու համար: Ինչ վերաբերում է հաղորդագրության ձևակերպմանը, ապա օգտագործվել է բաղաձայնությո՞ւ ռձական հնարը հայտարարության տարբեր հատվածներում (*implications for security and stability; close cooperation; ...capable of cutting the undersea fibre-optic cables...; current conflict; protect our politics*): Սովորաբար նման տեքստերում բաղաձայնությո՞ւ կիրառությունը նպատակ ունի ընթերցողների/ներկաների հիշողության մեջ հեշտությամբ ամրապնդել հիմնական գաղափարները, կարևոր մտքերը: Հաղորդագրությունը լի է նաև կրկնություն ռձական հնարով. *we* և *our* դերանունները օգտագործվել են համապատասխանաբար մոտ 16 և 12 անգամ: Նման ձևով կոմյունիկեի հեղինակները ցանկանում են մատնանշել իրենց միասնական լինելու գաղափարը: Բայերի տեսանկյունից, հաղորդագրությունը կառուցված է հիմնականում հետևյալ արտահայտություններից՝ *call on; stand in; speed up; hang over, և դարձվածքներից՝ to hold to account*, որոնք միտված են մեղմացնելու բովանդակությունը: Հատկանշական է *to take steps* արտահայտության կիրառությունը *act, perform, take measures* ձևերի փոխարեն, որը մեղմացնում է փաստաթղթի խիստ բնույթը: Կամ, օրինակ, *hold to account* արտահայտությունը՝ *responsible, amenable* բառերի փոխարեն, *to mount՝ to increase* բառի փոխարեն: Կիրառվում են հետևյալ բայերը՝ *to welcome, to condemn, to concern, to reaffirm, to warn, to urge*, որոնք խոսքն էլ ավելի ազդեցիկ ու ոգեշնչող են դարձնում: Հաղորդագրության ընդհանուր շարադրանքը նպատակ է հետապնդում ազդելու ընթերցողների հուզազգայականության վրա, այդ պատճառով էլ մեծ մասամբ կիրառվել են փաստարկային, իրական դեպքեր, ինչպես, օրինակ, *Some 750,000 are already experiencing starvation and acute malnutrition in Ethiopia, Afghanistan, Somalia, South Sudan and Yemen. Yet Russia continues its blockade of Black Sea ports, is conducting sustained attacks on grain silos, fertiliser stores and farming infrastructure, and is stealing grain from occupied areas for its own consumption or profit*: Հստակ թվային փաստարկը (750.000 մարդ) միշտ էլ մեծ ազդեցություն է գործում մարդկանց գիտակցության վրա: Ինչպես մեջբերվում է, մի շարք երկրներ՝ Եթովպիա, Եմեն, Սոմալի և այլն, մինչ ուսուուկրախինական պատերազմն արդեն ունեցել են նման կենսական խնդիրներ, բայց տվյալ դեպքում փաստն օգտագործվել է Ռուսաստանի դեմ հակամարտությունը մեծացնելու և մարդասիրական գաղափարներ արթնացնելու նպատակով: Նույն նպատակն է հետապնդում նաև Ռուսաստանի հետագա գործերը չափազանցված ներկայացնելու փաստը (*President Putin recently restated his ambition to return Russia*

to imperial glories through territorial conquest, while the threat of a nuclear strike by Russia hangs over the current conflict): Ոճական հնարներից կիրառվել են նաև գուգահեռ կառույցներ: Հաղորդագրությունը լի է բարդ համադասական և ստորադասական նախադասություններով: Հիմնականում կիրառվել են *and* (44), *because, which, while, yet* շաղկապները: Հատկանշական է նաև բազմաթիվ մակբայների կիրառությունը՝ *collectively, decisively, extremely, wholeheartedly, urgently, recently* և այլն: Ամփոփելով, կարող ենք ասել, որ պաշտոնական կոմյունիկեն լեզվական տեսանկյունից իրենից ներկայացնում է բազմաշերտ լեզվաբանական կառույց՝ լի ոճական հնարներով, բարդ կառույցներով, շարադրանքի տարբեր ձևակերպումներով:

Երրորդ ենթագլխում (*Դիվանագիտական տերմինների ստանձնահատկությունները*) քննության են առնվում դիվանագիտական տերմինները իմաստային, խոսքիմասային և բառակազմական տեսանկյուններից:

Դիվանագիտական տերմինաբանության կարևոր առանձնահատկությունն է միջազգային իրավական ակտերում և դիվանագիտական փաստաթղթերում լատինական (*alternare, de facto, de jure, expansio, denatura* և այլն) և ֆրանսիական (*agrement, depeche, denonciation, demarcation* և այլն) ծագման բազմաթիվ անվանումների առկայությունը: Դա պայմանավորված է այն փաստով, որ ի սկզբանե լատիներենն էր համարվում դիվանագիտության լեզու, իսկ միջին դարերում այս առաքելությունը ստանձնեց ավելի առաջադեմ ֆրանսերենը:

Տերմինները նաև կարող են ենթարկվել խոսքիմասային բաշխման: Տերմին կարող են դառնալ գոյականները, բայերը, ածականները: Տերմին լինել չեն կարող վերաբերականները, ձայնարկությունները, կապերը, շաղկապները, մակբայները:

Մեր ուսումնասիրության նյութը ցույց է տալիս, որ անգլերեն 600 դիվանագիտական տերմիններից 200-ը մենանդամ, իսկ մնացածը՝ երկանդամ կամ բազմանդամ բառակապակցություններ են: Օրինակներից երկանդամ տերմինները ավելի շատ են, քան բազմանդամները: Դրանք դրսևորվում են հետևյալ խոսքիմասային մասնակադապարներով.

Աղյուսակ 1. Երկանդամ տերմիններ

աճական+գոյական	political interests; plenipotentiary ambassador; a circular note; multilateral agreement; yearly report; statement written;
գոյական+գոյական	the top level; a visit card; time limit; customs control; cease-fire agreement; bargaining table;
բայ+գոյական	grant an immunity; hamper negotiations; gathering of information; pursue a goal; sever ties; keep the law.

Աղյուսակ 2. Եռանդամ տերմիններ

ածական + գոյական + գոյական	ambassadorial level talks; a good will mission;
ածական + ածական + գոյական	promising diplomatic steps; coherent foreign policy;
գոյական + գոյական + գոյական	friendship and cooperation treaty; public relations officer;
գոյական + նախդիր + գոյական	text of the resolution; body of the treaty; provision of a treaty; memorandum of understanding; immunity from prosecution; letter of recall:

Տերմինաբանական բոլոր համակարգերին բնորոշ են մի շարք ընդհանուր հատկանիշներ և առանձնահատկություններ: Ինչպես ցանկացած տերմինային համակարգ, այն նույնպես բաղկացած է մի շարք տերմինաբանական խմբերից ու ենթախմբերից, որոնց տարրերը սերտորեն փոխկապված են իմաստային ընդհանրությամբ:

Երրորդ գուխը (*Հուզարտահայտչականության առանձնահատկությունները դիվանագիտական դիսկուրսում*) բաղկացած է երեք ենթազվիսից: *Առաջին ենթազվիսում* (*Հուզարտահայտչականության լեզվական միջոցները դիվանագիտական հաղորդակցության մեջ*) դիտարկվում են հուզարտահայտչականության լեզվական միջոցները դիվանագիտական հաղորդակցության մեջ: Հուզարտահայտչականության միջոցներից են **փոխաբերությունը** (որը դիվանագիտական խոսքում օգտագործվում է որպես ունկնդիրների ուշադրությունը գրավելու հնար), **փոխանունությունը** (ներգործության ձևերից է, որը հանգեցնում է հասցեատիրոջ գիտակցության մեջ գոյություն ունեցող աշխարհի պատկերի վերափոխմանը), **համեմատությունը** (որը գործածվում է խոսքի օբյեկտի որոշ հատկանիշների վրա ուշադրությունը կենտրոնացնելու համար՝ այլ երևույթների հետ այն համեմատելու եղանակով), **մակդիրները** (ընդ որում, օգտագործվում են այնպիսի մակդիրներ, որոնց իմաստում արդեն իսկ կա գնահատողական երանգ), **ակնարկները** (դիվանագետների էլոյթներում ակնարկները հաճախ կապված են պատմական, վերջերս տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոնք լայնորեն լուսաբանվել են մամուլում և հասարակական հնչեղություն են առաջացրել), **դարձվածքները** (որոնք պարունակում են որոշակի գնահատական՝ հաճախ ներգրավելով առաձներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր):

Դիվանագիտական լեզվում առանձնակի տարածում է ստացել **փոխաբերությունը**: Որոշ փոխաբերություններ չափազանց հաճախ

օգտագործվելու պատճառով կորցրել են իրենց հուզարտահայտչական-գնահատողական նրբիմաստը: Տվյալ դեպքում կարելի է խոսել դիվանագիտական հաղորդակցության մեջ փոխաբերությունների «կաղապարվածության» մասին: Այնպիսի արտահայտություններ, ինչպիսին են՝ *force of power, champion of democracy, global economic architecture, to build a new partnership, to broaden the borders of understanding, to find its own path, to paint a picture of the modern world, a rich mosaic of democratic values*, այլև չեն համարվում հուզարտահայտչական, այլ դարձել են կաղապարներ, որոնք լայնորեն կիրառվում են հանրային պաշտոնական ելույթներում: Նշյալ փոխաբերությունները հուզարտահայտչականություն են ձեռք բերում պաշտոնական-գործնական ոճին հատուկ համատեքստում օգտագործվելիս: Փոխաբերությունները մեծացնում են խոսքի պատկերավորությունը, ուստի բանախոսները դրանք ներառում են իրենց բառապաշարում: Օրինակ՝ փոխաբերություններից շատերը կապված են *կրակ* իմաստային դաշտի հետ և բավականին հաճախ են հանդիպում *բորբոքել, թեժացնել* բառակապակցությունների հետ: Թերևս դա պայմանավորված է այն հանգամանքով, որ *կրակ* հայեցակերպային (կոնցեպտուալ) փոխաբերությունը օգտագործվում է թշնամու կերպար կերտելու համար: Այդ բառը ընկալվում է որպես բացասական, քանի որ այն հանդես է գալիս որպես թշնամական ուժ, գուժում վտանգի մասին: Այս փոխաբերությունը ստեղծվում է *կրակի* կործանարար հատկությունները հասցեատիրոջ հուզական մակարդակ փոխանցելու շնորհիվ:

Փոխանունությունը տարածված է դիվանագիտական հաղորդակցության մեջ, քանի որ այն թույլ է տալիս առարկայի նկատմամբ արտահայտել գնահատական ու վերաբերմունք ոչ այնքան ակնհայտորեն: Բացի այդ, փոխանունությունն օժտված է լեզուն տնտեսելու, խոսքը սեղմելու հատկությամբ, ինչն արժեքավոր է հանրային ելույթների ժամանակ: Դիվանագիտական խոսքին բնորոշ են այն փոխանունությունները, որոնք կաղապար են դարձել դրանց ստանդարտացման արդյունքում: Օրինակ՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը Թվիթերում գրել է, որ Ռուսաստանը երբեք չի կարող ընդունել Արևմուտքի դիրքորոշումը, քանի որ դա խախտում է միջազգային հարաբերությունները կարգավորող հիմնական նորմերը. *From Russia's standpoint, the idea of “rules-based world order” which is promoted by the Western colleagues, has nothing to do with the law, or universal moral. It contradicts the tendencies of shaping a more just, inclusive & polycentric world order*⁵.

⁵ Post Russian Embassy in South Africa:
<https://x.com/EmbassyofRussia/status/1392781477474095104> (11.04.2024).

*It is urgent for **the Kremlin** to hear this message and to act on it⁶.*

Վերոբերյալ փոխանունները (*From Russia's standpoint; the Kremlin*) առավել հաճախ են հանդիպում դիվանագիտական դիսկուրսում և կարող են համարվել խոսքային-իրադրական, կարող են իրացվել միայն տվյալ խոսքի մեջ կամ տվյալ խոսքային իրադրությունում: Նմանատիպ փոխանունությունները, որոնք գրեթե անսահմանափակ գործածություն ունեն դիվանագիտական դիսկուրսում, լեզվի խնայողության կենսական միջոցներից են: Սրանք հնարավորություն են տալիս խոսքի մեջ կրճատել կրկնվող բառերն ու կապակցությունները: Այդպիսի փոխանունությունները, որոնք տեղ են գտնում որոշակի խոսքային իրադրությունում, կարող են վերստին հուզարտահայտչականություն ձեռք բերել:

Երկրորդ ենթազվիսի (*Մեղմասության դերը դիվանագիտական խոսքում*) հիմնական նպատակն է դիտարկել մեղմասությունները, որոնք լինելով մարդկանց գիտակցության վրա ազդեցության առավել արդյունավետ գործիք՝ դառնում են մտաշահարկային միջոց: Դիվանագիտական մեղմասությունների զգալի մասը, ըստ էության, արտահայտում է ռազմական գործողություններ, օրինակ՝ *involvement* (*մասնակցություն*), *conflict* (*հակամարտություն*) միավորների գործածությունը *war* (*պատերազմ*) բառի փոխարեն; *device* (*սարք*)՝ *bomb*-ի (*ռումբ*) փոխարեն; *pacification* (*ճնշում, զսպում*)՝ *annihilation of military resistance* (*ռազմական դիմադրության ջախջախում*) կապակցության փոխարեն; *air support* (*օդային աջակցություն*)՝ *bombing, bombardment*-ի (*նվթակոծություն*) փոխարեն և այլն: Դիվանագետները մեղմասությունները գործածում են՝ իրականությունը մեղմելու համար, քանի որ նրանք ձգտում են բնակչության և բանակցող գործընկերների շրջանում չառաջացնել բացասական արձագանք:

ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքական հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի ելույթում մեղմասության օրինակ է *disinformation* (*ապատեղեկատվություն*) արտահայտության օգտագործումը՝ քաղաքական գործընթացներին արտաքին միջամտությունը բնութագրելու համար. *We will talk about **disinformation**, foreign interference in our political processes, the digital revolution, the Global Gateway, gender and diversity. It is a very nice programme. I am not going to talk about all of them, and I am not going to follow all these different issues.*

⁶ Ukraine: Speech by High Representative/Vice-President Josep Borrell at the UN Security Council session on Ukraine: https://www.eeas.europa.eu/eeas/ukraine-speech-high-representativevice-president-josep-borrell-un-security-council-session-ukraine_en (11.04.2024).

*It would be impossible, and I am not a specialist on almost any of them*⁷.

Այս արտահայտությունը *We will talk about disinformation* նվազեցնում է խնդրի արությունը, որը կարող է էական հետևանքներ ունենալ ժողովրդավարության և ազգային անվտանգության վրա: Բանախոսը նաև մեղմասություն է օգտագործում Եվրոպական միության առջև ծառայած խնդիրները քննարկելիս, ինչպիսիք են էներգետիկ և կլիմայական ճգնաժամը: Բանախոսը հավանաբար խուսափում է *crisis (ճգնաժամ)* բառը օգտագործելուց, փոխարենը իրավիճակը բնութագրում է որպես *big challenge (մեծ մարտահրավեր)*: Նա նաև օգտագործում է *radical uncertainty (արմատական անորոշություն)* բառակապակցությունը *chaos-ի (քաոս)* փոխարեն՝ աշխարհի ներկա վիճակը նկարագրելու համար: Ժողով Բորելի ելույթում մեղմասության կիրառումը կարելի է դիտարկել որպես ռազմավարություն, որը հաճախ օգտագործվում է հրապարակային ելույթներում:

Երրորդ ենթագլխում (*Դիվանագետի խոսքի հուզահաղորդակցական յուրահատկությունները*) քննարկվում է դիվանագետի լեզվական անհատականությունը և նրա խոսքային վարքագիծը: Դիվանագիտության ամենակարևոր գործոններից է պրոֆեսիոնալ դիվանագետների հաղորդակցությունը, որը հիմնված է հռետորական արվեստի, հաղորդակցական ռազմավարությունների ու մարտավարությունների կիրառման վրա: Այն բնութագրում է մասնագիտական դիսկուրսում դրսևորվող լեզվական անհատականությունը: Դիվանագետն այն մարդն է, ով կարողանում է նրբանկատորեն լուծել խնդիրները՝ առանց թշնամանք դրսևորելու, իրավիճակի խաղաղ լուծում գտնել, հատկապես՝ լարված իրավիճակում, և ուշադիր է մարդկանց հետ շփումներում: Խոսքի ազդեցության լեզվաբանական վերլուծության հիմնական խնդիրը բանախոսի ռազմավարությունների և նրա տրամադրության տակ եղած բոլոր լեզվական ռեսուրսների ուսումնասիրությունն է, որով էլ պայմանավորված է հաղորդակցական նպատակը:

Դիվանագիտական դիսկուրսի տեսական-մեթոդաբանական հիմքերի, թվային դիվանագիտության, դիվանագիտական տեքստերի կառուցվածքային և տերմինաբանական առանձնահատկությունների ու լեզվաոճական հնարների վերլուծությունը, որը հիմնված է հարուստ ու բազմազան նյութի վրա, հնարավորություն է տալիս հանգելու հետևյալ **եզրակացություններին**.

1. Դիվանագիտական դիսկուրսի ժանրերի բազմազանության մեջ

⁷ EU Ambassadors Annual Conference 2022: Opening speech by High Representative Josep Borrell: https://www.eeas.europa.eu/eeas/eu-ambassadors-annual-conference-2022-openingspeech-high-representative-josepborrell_en?fbclid=IwAR1ubEz3zYoXnfAvHeIrD05aBiQbVaHJiSDxWTECuFL-7yS0cmje7plkol (10.09.2023).

գերակշռում են այն ժանրերը, որոնց հասցեատերերը լրատվամիջոցներն են և զանգվածային լսարանը: Դա պատահական չէ, քանի որ ժամանակակից դիվանագետները, լինելով հանրային դիվանագիտության ակտիվ մասնակիցներ, հանդես են գալիս տարբեր լսարաններում, հարցազրույցներ են տալիս ՋԼՄ-ներին, ելույթ ունենում հեռուստատեսությամբ, կազմակերպում մամուլի ասուլիսներ և միջազգային ճեպագրույցներ՝ երկխոսության միջոցով ազդելով հասարակական կարծիքի վրա, որն էլ իր հերթին այսօր էական ազդեցություն ունի արտաքին քաղաքականության մշակման և իրականացման վրա:

2. Թվային դիվանագիտությունը բազմադիսկուրսային կազմավորում է, որի տեքստերի առանցքային հաղորդակցական-գործաբանական կատեգորիաներն են ինքնաներկայացումը և մտաշահարկումը, որոնք սերտորեն կապված են ՋԼՄ-ների և համացանցային հաղորդակցության դիսկուրսների հետ, և հետապնդում է մի շարք նպատակներ.

- հաջողությամբ իրականացնում է իրազեկման, գնահատման, փաստարկման և հասարակական գիտակցության մտաշահարկման հաղորդակցական ռազմավարություններ,

- նպաստում է քաղաքացիների միջև հաղորդակցության հաստատմանը, ապահովում հանրային տարածքի հասանելիությունը շատ քաղաքական սուբյեկտների համար, ստեղծում պայմաններ քաղաքական գործընթացին քաղաքացիների մասնակցության համար և իրացնում հանրային շահերը,

- առանձնանում է հաղորդակցության ավելի բաց բնույթով, թափանցիկությամբ, արտահայտությունների հակիրճությանը, հուզական երանգավորմամբ, ինչպես նաև տեղեկատվության ավելի մեծ հասանելիությամբ:

Թվային դիվանագիտության իրականացման համար օգտագործվում են ԱԳՆ-ների կայքերը, գերատեսչական հարթակները, բլոգները, սոցիալական ցանցերը (մասնավորապես *Facebook*, *X (Twitter)*, *Instagram*, *VK*, *YouTube*), մեդիա ռեսուրսները, որոնք ունեն մի շարք հատկանշական լեզվական առանձնահատկություններ՝

- հրապարակումների հակիրճություն, ինչը պայմանավորված է հնարավոր նշանների թույլատրելի քանակով,

- հուզագնահատողական բառապաշարի կիրառություն (մասնավորապես բացասական գնահատականը արտահայտվում է հեզնական, երկիմաստ լեզվական միավորներով),

- գերակտիվ խոսքային գործողություններում պարզ և կարճ կառույցներ,
- դիվանագիտական լեզվառճի քարացածության բացակայություն,
- հեշթեգների և հղումների առկայություն,
- խոսակցական-կենցաղային բառերի հաճախադեպ կիրառություն,

- անձնական կարծիք արտահայտելու հնարավորություն:

Դիվանագիտական կայքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիվանագիտական գերատեսչությունների պաշտոնական կայքերի ձևավորման համար կարևոր են մի շարք լեզվանշանային հարացույցի առանձնահատկություններ՝

- կառուցվածքի, դիզայնի, բովանդակության չափանիշներ,
- գրաֆիկական խորհրդանիշներ և ինստիտուցիոնալ բնույթի պատկերներ,
- գունային ծածկագրի ընտրություն,
- արտահայտչականության և հուզականության բացակայություն,
- լայն լսարանին ուղղված հաղորդագրություններ,
- տեքստերի հսկիրճություն,
- կայուն շարահյուսական կառուցվածք և շարադրանքի որոշակի ձև,
- հաճախակի կրկնվող արտահայտություններ,
- դինամիկ փոփոխություններ:

3. Դիվանագիտական պաշտոնական փաստաթղթերում, որպես գրավոր հաղորդակցության նմուշներ կիրառվող լեզվի համար կարևոր է ոչ միայն ոճական կատարելությունը, այլև բացարձակ համապատասխանությունը ներկայացված բովանդակությանը, այս կամ այն հարցում պետության դիրքորոշման ու քաղաքականության իմաստի հստակ արտահայտումը:

4. Դիվանագիտական փաստաթղթերի լեզվական, քերականական և ոճական առանձնահատկությունների քննությունը բացահայտել է հետևյալ բնութագրական գծերը՝

- շարահյուսական միջոցների ստանդարտացում ու կրկնություն,
- պայմանական-գիշտողական նախադասությունների կիրառություն,
- բարդ համադասական նախադասությունների կիրառություն,
- ճկուն ձևակերպումների կիրառման անհրաժեշտություն, ինչը համապատասխանում է դիվանագիտական վարվելակարգի, դիվանագիտական նրբանկատության պահանջներին,
- բազմակի անդամների կիրառություն,
- քաղաքավարական ձևակերպումների ու դարձվածքների լայն կիրառություն (կախված փաստաթղթի բնույթից),
- վաղակատար ներկա ժամանակաձևի հաճախակի կիրառություն,
- դերբայով կազմված միակազմ նախադասությունների գործածություն,
- կրկնությունների, գուգահեռ կառույցների, բաղաձայնայնության ոճական հնարի կիրառություն,
- հրամայական եղանակի ու հրամայական նախադասությունների սակավաթիվ օգտագործում, բացառիկ դեպքերում՝ վերջնագրերում և բողոքի նոտաներում,

- կտրուկ ոճի, երկիմաստ հռետորաբանության, ակնարկների, հապավումների բացակայություն:

5. Դիվանագիտական լեզվին բնորոշ է հուզարտահայտչականության զանազան միջոցների ընտրությունը, որոնք ապահովում են խոսքի հակիրճությունը, խոսքի կառուցվածքի անդեմությունը և սուբյեկտիվության բացակայությունը: Այս արտահայտչամիջոցները կարող են գործածվել նաև որպես կաղապարներ: Այս դեպքում ակներև է պատկերավորման հուզարտահայտչական միջոցների չեզոքացումը: Դիվանագետների ելույթներում նկատվում են լեզվական այնպիսի միջոցների օգտագործման միտում, որոնք թույլ են տալիս քողարկել իրականության երևույթների բացասական կողմերը: Այսպիսի դեպքերում ակներև է մեղմասությունների օգտագործումը:

6. Դիվանագիտական տերմինաբանության կիրառության ոլորտում հատուկ տերմինաբանության օգտագործումը հաճախ թելադրված է դիսկուրսների փոխներթափանցմամբ և փոխազդեցությամբ և զերծ է հուզարտահայտչականությունից:

Այսպիսով՝ մեր օրերում դիվանագիտական դիսկուրսի հետազոտությունը հետզհետե ավելի մեծ հետաքրքրություն է ձեռք բերում, իսկ լեզվաբանական տեսանկյունից դրա խորը ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճանաչելու միջազգային փոխգործակցության նոր կողմեր:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Դիվանագիտական դիսկուրսի հետազոտման հայեցակերպը լեզվաբանության մեջ: *Science and Education a New Dimension, Philology*, X(77), Issue: 264, 2022, 23-29:

2. Դիվանագիտական փաստաթղթերի դիսկուրսային բնութագիրը: *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, Vol. 26 No. 1 (32), Երևան, 2022, 76-84 (համահեղինակ՝ Ա. Կնյազյան):

3. Դիվանագիտական տերմինների առանձնահատկությունները: *Գիտական տեղեկագիր* No 1, Ստեփանակերտ, 2023, 169-183 (համահեղինակ՝ Ա. Կնյազյան):

4. Մեղմասությունները ժամանակակից դիվանագիտական դիսկուրսում: *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, Vol. 27 No. 2 (35), Երևան, 2023, 56-70 (համահեղինակ՝ Ա. Կնյազյան):

5. Թվային դիվանագիտության լեզվական առանձնահատկությունները: *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, Vol. 28 No. 1 (36), Երևան, 2024, 115-133:

6. On Some Linguistic Features of Communication in Diplomacy. *Armenian Folia Anglistika*, Yerevan 2024. Vol. 20, Issue 1 (29), 93-106.

7. Դիվանագիտական դիսկուրսի լեզվահաղորդակցական առանձնահատկությունները: *Գիտական Արցախ* N3 (22), Երևան, 2024, 144-153:

ВАРДУИ ГУКАСЯН
СТИЛИСТИЧЕСКАЯ И ПРАГМАТИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА
ДИПЛОМАТИЧЕСКОГО ДИСКУРСА

Резюме

Предлагаемая работа ставит своей **целью** изучение роли лингвистических приемов, структурных и терминологических особенностей дипломатических текстов, которые имеют особое значение в построении эффективного дискурса. При этом значительное внимание уделяется дискурс-анализу, который на современном этапе развития науки приобрел междисциплинарный характер. **Цель** диссертации – изучить теоретико-методологические основы дипломатического дискурса, представить развитие этой дисциплины и показать ее значение в современных дипломатических процессах. Работа также направлена на изучение цифровой дипломатии как нового средства коммуникативной стратегии, лингвистических особенностей коммуникационных платформ, а также функциональных особенностей дискурсивных жанров дипломатического общения в виртуальном пространстве.

Данная цель обуславливает необходимость постановки и решения следующих исследовательских задач:

1. изучить дипломатический дискурс и выделить его параметры и базовые системообразующие характеристики;
2. проанализировать жанровые особенности дискурса цифровой дипломатии и выявить характер применения ее стратегий;
3. классифицировать и описать характерные особенности дискурсивных жанров дипломатических документов;
4. изучить языковые средства выражения эмоций в дипломатическом общении;
5. проанализировать стилистические характеристики дипломатического дискурса с учетом структурных и терминологических особенностей и выяснить их значение в построении эффективного дискурса.

Актуальность представленной работы обусловлена тенденциями развития современной лингвистики, которая уделяет большое внимание коммуникативным и прагматическим аспектам институционального дискурса, проблемам взаимодействия коммуникаторов, изучению языка в тесной связи с человеческой деятельностью, а также растущей роли цифровой дипломатии.

Научная новизна исследования состоит в том, что в настоящей работе впервые предпринимается попытка комплексного анализа дискурса цифровой дипломатии

как новой коммуникативной практики. **Новизна** работы заключается в том, что на комплексном лингвистическом материале предпринята попытка изучить лингвостилистические и прагматические особенности дипломатических документов.

Задачи исследования и специфика анализируемого материала обусловили выбор следующих **методов** исследования в качестве основных: метод непосредственного наблюдения материала с последующим анализом и обобщением результатов; дедуктивно-индуктивный метод; контекстуально-интерпретационный метод; метод интен-анализа; метод контент-анализа, методы лингвистического описания и классификации при изучении дипломатического дискурса и его терминологии, а также дискурсивных тактик и стратегий.

Теоретическая значимость исследования состоит в том, что ее результаты вносят определенный вклад в развитие изучения понятия «дискурс» и позволяют расширить и углубить знания о состоянии языка дипломатии на фоне глобальных политических изменений. Данная работа может способствовать дальнейшей разработке понятия «дипломатический дискурс», теории речевого воздействия и взаимодействия коммуникантов в сфере международных отношений.

Практическая ценность работы состоит в том, что основные теоретические положения и выводы, полученные в результате исследования, могут быть использованы в вузовских курсах «Основы теории коммуникации», «Иностранный язык для профессиональных целей», в спецкурсах «Цифровая дипломатия», «Современные информационные технологии в дипломатической практике», а также в курсовых и выпускных квалификационных работах. Данное исследование также имеет прикладное значение: его результаты могут быть непосредственно использованы в профессиональной дипломатической практике.

VARDUHI GHUKASYAN
STYLISTIC AND PRAGMATIC CHARACTERISTICS OF DIPLOMATIC
DISCOURSE

Summary

The **aim** of the research is to study the role of linguistic characteristics, structural and terminological features of diplomatic texts, which are of particular importance in the construction of effective discourse. Considerable attention is paid to discourse analysis which at the current stage of scientific development has acquired an interdisciplinary character. The aim of the research is to study the theoretical and methodological foundations of diplomatic discourse, to present the development of this discipline and to show its importance in modern diplomatic processes and procedures. The present investigation also aims to study digital diplomacy as a new means of communication strategy, the linguistic features of diplomatic communication platforms, as well as functional features of discursive genres of diplomatic communication in virtual space.

To arrive at the research goals, the following **objectives** are put forward:

1. to study diplomatic discourse and identify its parameters and basic system-forming characteristics;
2. to analyze the genre features of the discourse of digital diplomacy and identify the nature of the application of its strategies;
3. to classify and describe the characteristic features of discursive genres of diplomatic documents;
4. to study the linguistic means of expressing emotions in diplomatic communication;
5. to analyze the stylistic characteristics of diplomatic discourse, taking into account structural and terminological features, and to find out their significance in constructing an effective discourse.

The **topicality** of the presented work is determined by the trends in the development of modern linguistics, which pays great attention to the communicative and pragmatic aspects of institutional discourse, problems of interaction between communicators, the study of language in close connection with social activity, the growing role of digital diplomacy as well.

The **scientific novelty** of the study lies in the fact that the study is an attempt to comprehensively analyse the discourse of digital diplomacy as a new communicative practice. This study covers the field of discourse theory, which is also within the scope of

contemporary linguistic research. The novelty of the work also lies in the fact that the linguostylistic and pragmatic features of diplomatic documents are researched.

The objectives of the study and the specific nature of the material being analyzed have determined the choice of the following **research methods**: the method of direct observation of the material with subsequent analysis and generalization of the results; deductive-inductive method; contextual-interpretative method; intent analysis method; content analysis method, methods of linguistic description and classification in the study of diplomatic discourse and its terminology, as well as discursive tactics and strategies.

The **theoretical value** of the study lies, on the one hand, in the fact that its results make a certain contribution to the development of the research of the concept of discourse and allow us to expand and deepen knowledge about the language of diplomacy. The study enables to further the development of the concept “diplomatic discourse” and attempts to develop a theory of speech influence and interaction of communicants in the field of international relations.

The findings of the research have significant **practical value** and can be implemented in theoretical and practical courses of Digital Diplomacy, Modern Information Technologies in Diplomatic Practice, Foreign Language for Professional Purposes. The results of the study can be directly used in professional diplomatic practice.

